Տվյալներ

Խնդրում եմ տրամադրել ձեր ընկերության կամ սեփականության կառուցվածքի ամփոփ նկարագիրը, եթե այդպիսի փաստաթուղթ գոյություն ունի:

Կից ներկայացվում է փաստատուղթ առ այն , որ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ 100% բաժնետոմսերը պատկանում են Թագուհի Թովմասյանին:

1. Խնդրում եմ առանձին նշել «Ժողովուրդ» օրաթերթի և կայքի աշխատակիցների թիվը՝ նամակին պատասխանելու օրվա դրությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթի և կայքի աշխատակիցների թիվը `12:

2. Խնդրում եմ տրամադրել «Ժողովուրդ» օրաթերթի 2024 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը, ընդհանուր եկամուտների, գովազդից ստացված եկամտի մասին տեղեկություններ:

«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ի՝ 2024 թ. տարեկան հաշվետվությունը

ԵԿԱՄՈՒՏ
Այդ թվում՝

թերթեր՝ 4.827.190 (չորս միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար հարյուր իննսուն) դրամ:

Գովազդ՝ 65.768.624 (վաթսունհինգ միլիոն յոթ հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր քսանչորս) դրամ:

1-ին եռամսյակ՝

թերթեր՝ 1.175.480 դրամ

գովազդ՝ 13.430.484 դրամ

ընդհանուր՝ 14.605.964 դրամ

2-րդ կիսամյակ՝

թերթ՝ 1.167.870 դրամ

գովազդ՝ 15.235.162 դրամ

ընդհանուր՝ 16.403.032 դրամ

3-րդ կիսամյակ՝

թերթեր՝ 1.173.060 դրամ

գովազդ՝ 16.489.161 դրամ

ընդհանուր՝17.662.221 դրամ

4–րդ կիսամյակ՝

թերթ՝ 1.310.780 դրամ

գովազդ՝ 20.613.817 դրամ

ընդհանուր՝ 21.924.597

ԾԱԽՍԵՐ
Այդ թվում՝

Տպագրական ծախս՝ (6.120.000 վեց միլիոն հարյուր քսան հազար) դրամ:

Աշխատավարձ՝ 50.762.418 (հիսուն միլիոն յոթ հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր տասնութ) դրամ:

Այլ ծախսեր՝ 5.850.289 (հինգ միլիոն ութ հարյուր հիսուն հազար երկու հարյուր ութսունինը) դրամ:

ՀԱՐԿԵՐ
Եկամտահարկ՝ 9.589.485 (ինը միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար չորս հարյուր ութսունհինգ) դրամ:

Շրջ. հարկ՝ 3.360.836 (երեք միլիոն երեք հարյուր վաթսուն հազար ութ հարյուր երեսունվեց) դրամ:

Սոց. վճար՝ 2.151.196 (երկու միլիոն հարյուր հիսունմեկ հազար հարյուր իննսունվեց) դրամ:

Դրոշմանիշ՝ 694.000 (վեց հարյուր իննսունչորս հազար) դրամ:

3. Խնդրում ենք հստակեցնել՝ արդյո՞ք ներկայացված ֆինանսական հաշվետվության մեջ ներառված են միայն թերթին վերաբերող տվյալները, թե՞ նաև կայքի ֆինանսական ցուցանիշները:

Տվյալներում ներառված են, և՛ թերթին վերաբերող տվյալները, և՛ կայքի ֆինանսական ցուցանիշները:

4. Խնդրում եմ տրամադրել տվյալներ լսարանի քանակի վերաբերյալ՝ մասնավորապես, թե որքան տպագիր թերթ է վաճառվում բաժանորդագրության և հատավաճառի միջոցով:

Թերթին վերաբերվող վերը նշված տվյալները տիրապետում են հետևյալ ընկերությունները՝ ՀայՓոստ ՓՊԸ, Express Plus և «ԲԼԻՑ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ:

5. Հնարավորության դեպքում, խնդրում եմ տրամադրել կայքի դիտումների միջին վիճակագրության վերաբերյալ տվյալներ:

Փաստաթղթերին կցված են նաև վիճագրական տվյալները:

6. Քանի որ «Ժողովուրդ» օրաթերթի պաշտոնական կայքում չկան տեղեկություններ գլխավոր խմբագիր Քնար Մանուկյանի կենսագրության վերաբերյալ, իսկ բաց աղբյուրներում առկա տվյալները սակավ են, խնդրում եմ տրամադրել խմբագրի կենսագրական և գործունեության վերաբերյալ տվյալներ:

Փաստաթղթերին կցված է «Ժողովուրդ» օրաթերթի խմբագիր Քնար Մանուկյանի կենսագրությունը:

7. Եթե «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ն գերգրավված է լրատվականից բացի այլ բիզնես գործունեության մեջ (օրինակ՝ մամուլի տարածման ծառայություններ, մարքեթինգային ծառայություններ և այլն), խնդրում եմ նշել դրանց մասին:

Ոչ, «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ն գերգրավված չէ լրատվականից բացի այլ բիզնես գործունեության մեջ:

8. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացված հայտարարագրի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Թովմասյանը «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ն հավատարմագրային կառավարման է հանձնել Հասմիկ Դավթյանին: Խնդրում եմ տրամադրել Հասմիկ Դավթյանի կենսագրությունը և գործունեության վերաբերյալ տվյալներ:

Փաստաթղթերին կցված է նաև Հասմիկ Դավթյանի կենսագրությունը:

9. Բացի այդ, խնդրում եմ հստակեցնել՝ արդյոք գոյություն ունեն որոշակի չափորոշիչներ, որոնց հիման վրա որոշվում է, թե որ հոդվածներն են հրապարակվում միայն թերթում, իսկ որոնք՝ կայքում: Եթե նման չափորոշիչներ կան, խնդրում եմ մանրամասնել:

Այո, մենք ունենք չափանիշներ, դրանք մեր ներքին էթիկայի կանոններն են, որոնք մենք մշակել ենք խմբագրությունում և այդ կանոնները հրապարակված են մեր կայքում (https://armlur.am/about/: